2
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2022

Luys Լույս®



ՆԵՆՍԻ ՓԵԼՈՍԻԻ ՄԵՍԻՋՆԵՐԸ

ՆԵՆՍԻ ՓԵԼՈՍԻԻ ՄԵՍԻՋՆԵՐԸ

ՀՀ ԵՐԲԵՎԷ ԱՅՑԵԼԱԾ ԱՄՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԱՅՑԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր որոշ փուլերով նկատելի է եղել հարաբերությունների ակտիվացում, որը նաև դրսևորվել է շփումների ինտենսիվացմամբ և ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների Հայաստան կատարած այցերով: Տարբեր շրջաններում Հայաստանի Հանրապետություն են այցելել ԱՄՆ մի քանի քարտուղարներ: Մասնավորապես, առաջին այցը եղել է 1992թ. ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի կողմից Հայաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և դեսպանության բացման նպատակով: Երկրորդ պետքարտուղարը, ով այց է կատարել Հայաստան, Հիլարի Քլինթոնն է: Վերջինս երկու անգամ է Հայաստան այցելել՝ 2010 և 2012թթ.: Հայ-ամերիկյան հարաբերությունների ամբողջ պատմության ընթացքում միայն մեկ պաշտպանության քարտուղար (Դոնալդ Ռամսֆելդը՝ 2001թ.), մեկ գանձապետարանի քարտուղար (Ջեյքոբ Լյուն՝ 2015թ.) և ԱՄՆ ռազմածովային ուժերի մեկ քարտուղար (Ռեյ Մաբուսը՝ 2012թ.) է այցելել Հայաստան:

Այս համատեքստում ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի 2022թ. սեպտեմբերի 17-19-ին Հայաստան կատարած այցը կարելի է պատմական համարել, քանի որ վերջինս ԱՄՆ ամենաբարձրաստիճան պաշտոնյան է, ով երբևէ այցելել է Հայաստան: Ընդհանրապես պետք է հաշվի առնել, որ Փելոսին մեծ ազդեցություն ունեցող գործիչ է և լուրջ ազդեցություն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական հարցերում և ինքնուրույն որոշումներ է կայացնում, որոնք կարող են համահունչ չլինել գործադիր իշխանության հետ:

Նենսի Փելոսին պատմական գործիչ է Միացյալ Նահանգներում: 2007թ. ստանձնելով Ներկայացուցիչների պալատի խոսնակի պաշտոնը՝ նա դարձավ Ներկայացուցիչների պալատի առաջին կին խոսնակը: Փելոսին կրկին պատմություն

կերտեց 2019-ին, երբ վերընտրվեց իր պաշտոնում՝ դառնալով վերջին վեց տասնամյակների ընթացքում առաջին մարդը, ով վերընտրվեց խոսնակի պաշտոնում:[1]

Ինչ վերաբերում է Նենսի Փելոսիի սեպտեմբերի 17-19-ին Հայաստան կատարած այցին, ապա կան հարցեր, որոնց հարկ է անդրադառնալ: Մասնավորապես, ինչո՞ւ չչեղարկվեց ԱՄՆ նախագահից հետո երկրորդ պաշտոնը զբաղեցնող անձի այցը Հայաստան՝ չնայած ադրբեջանական ագրեսիային: Ինչո՞վ էր պայմանավորված վերջինիս այցը Հայաստան: Որո՞նք էին այն ուղերձները, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակի այցից կարելի է վեր հանել:

Նենսի Փելոսիի այցի մասին փակ տեղեկատվությունը հասանելի դարձավ օգոստոսի վերջին՝ այն ժամանակ, երբ դեռ ադրբեջանական ագրեսիան Հայաստանի նկատմամբ տեղի չէր ունեցել: Ադրբեջանական հարձակումը մի քանի ուղղություններով սկսվեց սեպտեմբերի 13-ին: Իսկ Նենսի Փելոսիի այցի մասին լայն զանգվածներին հայտի դարձավ արդեն սեպտեմբերի 15-ին: Այսինքն՝ նախօրոք ծրագրված այցին չխանգարեց ադրբեջանական ագրեսիան: Թեև Փելոսին կարող էր այցը չեղարկել ագրեսիայից հետո, այնուամենայնիվ նա նախընտրեց չչեղարկել այն և սեպտեմբերի 17-ին կատարեց իր պատմական այցը Հայաստան: Հարկ է նաև նշել, որ Նենսի Փելոսիի այցը չի եղել տարածաշրջանային, այսինքն՝ նա այդպես էլ Թբիլիսի և Բաքու չի ժամանել՝ չնայած Բաքվի լոբբիստական ջանքերին՝ այնտեղ նմանատիպ այց կազմակերպելու համար:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակի պատվիրակության կազմի մեջ էին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրանկ Փալոնը, Ջեքի Սփիերը և հանձնախմբի անդամ Աննա Էշուն: Ուշադրության է արժանի այն փաստը, որ կոնգրեսականներ Ջեքի Սփիերը և Աննա Էշուն ԱՄՆ Կոնգրեսի միակ ներկայացուցիչներն են, որոնք հայկական արմատներ ունեն:[2]

Սեպտեմբերի 17-19-ի այցի ընթացքում Ներկայացուցիչների պալատի խոսնակ Փելոսին հանդիպել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին և Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին՝ քննարկելու հայ-ամերիկյան հարաբերությունները և ներկայիս անվտանգային իրավիճակը: Այցի

[1] Nancy Pelosi, full bibliography, https://pelosi.house.gov/biography-0, (26.09.2022).

[2] Eshoo Statement on Congressional Delegation to Armenia, https://eshoo.house.gov/media/press-releases/eshoo-statement-congressional-delegation-armenia, (26.09.2022).

շրջանակում Ներկայացուցիչների պալատի խոսնակ Փելոսին հանդես եկավ մամուլի ասուլիսով, այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր և ելույթ ունեցավ «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնում:

ՆԵՆՍԻ ՓԵԼՈՍԻԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ներկայացուցիչների պալատի խոսնակի այցը Հայաստան կարելի պայմանավորել մի քանի հանգամանքներով:

Թերևս, առաջին դրդապատճառը, որը նաև շատերը մատնանշում են, նոյեմբերին ԱՄՆ-ում կայանալիք միջանկյալ ընտրություններն են, որի ժամանակ ընտրվելու են ԱՄՆ երկու պալատների անդամները: Վերջերս կատարված հարցումները ցույց են տալիս, որ հանրապետականները բավական մեծ հնարավորություն ունեն հաղթելու ԱՄՆ միջանկյալ ընտրություններում և մեծամասնություն կազմելու Ներկայացուցիչների պալատում: Սենատում հանրապետականները նույնպես հաղթելու հնարավորություն ունեն, այնուամենայնիվ, Սենատի պարագայում հարցումների արդյունքներն առավել վիճահարույց են, քան Ներկայացուցիչների պալատի դեպքում է:

Այս առումով ԱՄՆ-ում հայ համայնքի ձայները կարևոր են դեմոկրատ ներկայացուցիչների համար: Ի դեպ, բացի Ֆրենք Փալոնից, մնացած երեք կոնգրեսականները ներկայացնում են Կալիֆոռնիայի նահանգը, որտեղ բավական մեծ թվով հայեր կան: Այնուամենայնիվ, սա միակ և հիմնական պատճառը չէ խոսնակի՝ Հայաստան կատարած այցի համար:

Թեև ընտրությունները ներքաղաքական կարևոր նշանակություն ունեն, այնուամենայնիվ խոսնակի այցի դրդապատճառների թվում առանցքային կարևորություն ունի Նենսի Փելոսիի անձնական մոտեցումը հայերի նկատմամբ: Փելոսին մշտապես եղել է հայերի լավագույն բարեկամներից Վաշինգտոնում և մշտապես աջակցել է հայամետ բոլոր նախաձեռնություններին: Պատահական չէ, որ Փելոսիի պատվիրակության կազմում էին արմատներով հայ երկու կոնգրեսականները, ովքեր Ֆրանկ Փալոնի հետ ԱՄՆ-ում հայ համայնքի և հայկական շահերի առաջամարտիկներն են: Իսկ այցը չչեղարկելու հանգամանքը Հայաստանի համար նման ծանր ժամանակահատվածում պայմանավորված էր Նենսի Փելոսիի՝ հայերին աջակցություն ցուցաբերելու ցանկությամբ: Ադրբեջանի կողմից

սեպտեմբերի 13-ի ագրեսիայի մասին խոսելիս Նենսի Փելոսիի հայտարարությունները շատ ավելի կոշտ, հասցեական և թիրախավորված էին Ադրբեջանի դեմ՝ ի տարբերություն ԱՄՆ Պետքարտուղարության պաշտոնական հայտարարությունների: Սա մի կողմից պայմանավորված է նրանով, որ խոսնակի պաշտոնը քաղաքական պաշտոն է, և Նենսի Փելոսին կարող էր իրեն թույլ տալ քաղաքական լեզվով ներկայացնել իրավիճակը, այլ ոչ դիվանագիտական: Եվ երկրորդը, դա անձամբ Նենսի Փելոսիի ցանկությունն էր «ապօրինի և սարսափելի հարձակումներ» բառակապակցությամբ նկարագրել ադրբեջանական ագրեսիան Հայաստանի դեմ՝ դրանով արտահայտելով իր կարեկցանքը հայերի նկատմամբ: Բնականաբար, Նենսի Փելոսիի այցը և հայամետ հայտարարությունները արժանացան Ադրբեջանի ԱԳՆ-ի կոշտ քննադատությանը այն պատճառով, որ հասցեական էին և հստակ մեղադրանք էին պարունակում Ադրբեջանի դեմ: Մյուս կողմից էլ Ադրբեջանը տարակուսած էր, որ իրենց ջանքերը՝ Նենսի Փելոսիին Բաքու բերելու հետ կապված, չպսակվեցին հաջողությամբ:[3]

ՆԵՆՍԻ ՓԵԼՈՍԻԻ ԱՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Հայաստան կատարած իր այս այցով Նենսի Փելոսին իր անձնական աջակցությունը հայտնեց հայերին և Հայաստանին՝ միաժամանակ մի քանի ուղերձ հղելով հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման հեռանկարների մասին:

Չպարտադրելով Հայաստանին արտաքին քաղաքական կողմնորոշումը փոխել, մասնավորապես՝ դուրս գալ ՀԱՊԿ-ից կամ ԵԱՏՄ-ից, Փելոսին շեշտեց, որ նախ հայկական կողմն ինքը պետք է հասկանա, թե ինչ է ուզում և այնուհետև դա քննարկի ԱՄՆ իշխանությունների հետ: Սա այցի ամենագլխավոր ուղերձն էր, որը փորձեց Նենսի Փելոսին հասցնել ՀՀ իշխանություններին, քանի որ ԱՄՆ կողմը ակնկալում է հստակ առաջարկների ներկայացում ՀՀ իշխանությունների կողմից, որոնց շրջանակներում կարելի է առավել խոր համագործակցություն իրականացնել երկու երկրների միջև: Իրականում, այս այցը մեծ հնարավորություն էր հայկական կողմի համար՝ հանդես գալու հստակ առաջարկներով, անգամ եթե ՀՀ-ն պատրաստ չէ քաղաքական խոր համագործակցություն առաջարկել ԱՄՆ-ին, տնտեսական և

[3] Nancy Pelosi Condemns Azerbaijan Over Armenia Attack, https://time.com/6214465/pelosi-condemns-azerbaijan-over-armenia-attack/, (26.09.2022).

բիզնես գործունեության առումով հնարավորությունները շատ ավելի բաց են, և այդ ուղղությամբ հարաբերությունները զարգացնելու զգալի ներուժ կա:

Նենսի Փելոսիի ուղերձներում նաև շատ կարևորվում էր Հայաստանում ժողովրդավարության պահպանման անհրաժեշտությունը: Փելոսիի խոսքերով՝ «ԱՄՆ-ը հավատարիմ է Հայաստանի անվտանգությանը, ժողովրդավարությանը, և (Միացյալ Նահանգները) Հայաստանի կողքին է դժվար պահին: Աշխարհում դժվար ժամանակներ են: Մենք գտնվում ենք ժողովրդավարություն և ավտոկրատիա պայքարի մեջտեղում… Հայաստանը գտնվում է ժողովրդավարության և ավտոկրատիայի միջև այս բանավեճի կենտրոնում՝ Ռուսաստանին իր մտերմությամբ…»[4]: Հայաստանում ժողովրդավարության պահպանման նման շեշտադրումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անգամ Միացյալ Նահանգները բախվում է ժողովրդավարության ճգնաժամի երկրի ներսում: Ուստի, ժողովրդավարությունը ԱՄՆ-ի համար դառնում է ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական կարևոր խնդիր:

Այնուամենայնիվ, ժողովրդավարական երկիր լինելը դեռ չի նշանակում ԱՄՆ-ի հետ սերտ դաշնակցային հարաբերություններ ունենալ: Այս առումով Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը պրագմատիզմի սահմաններում է: Միացյալ Նահանգների ռազմավարական շահերը միշտ գերակայում են: Սրա վառ օրինակն են Սաուդյան Արաբիա - Միացյալ Նահանգներ հարաբերությունները, չնայած որ Սաուդյան Արաբիայում բոլոր քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները սահմանափակված են, և ժողովրդավարության մասին խոսելը անիմաստ է: Ստացվում է, որ ԱՄՆ շահերի առկայությունը միայն բավարար է խոր ռազմաքաղաքական հարաբերություններ հաստատելու համար:

Բացի այդ, Նենսի Փելոսին շեշտադրեց ժողովրդավարության պահպանման հարցը, քանի որ սա Բայդենի վարչակազմի կարևորագույն ուղղություններից մեկն է՝ ի տարբերություն նախորդ նախագահ Թրամփի: 2021թ. դեկտեմբերին նախագահ Բայդենի նախաձեռնությամբ անցկացվել էր Ժողովրդավարության առաջին գագաթնաժողովը՝ հեռավար ձևաչափով, որին մասնակցել էին ավելի քան 100 երկրների ղեկավարներ, ներառյալ՝ Հայաստանի վարչապետը: Այս տարի դեկտեմբերին կայանալու է Ժողովրդավարության երկրորդ գագաթնաժողովը, սակայն այս անգամ բոլոր ներկայացուցիչները հրավիրվելու են ԱՄՆ: Հրավեր

[4] Speaker Pelosi Remarks at Address on U.S. Commitment to Armenia's Security and Democracy, https://am.usembassy.gov/speaker-pelosi-cafesjian/, (26.09.2022).

ամենայն հավանականությամբ կստանա նաև Հայաստանը, որի շրջանակներում չի կարելի բացառել նախագահ Բայդենի և ՀՀ վարչապետ Փաշինյանի հանդիպումը:

Նենսի Փելոսիի այցի հետ կապված՝ շատերի մոտ կային սպասելիքներ առ այն, որ ԱՄՆ-ը Հայաստանին կտրամադրի ռազմական օգնություն, ինչպես Ադրբեջանին, որը միլիոնավոր դոլարների օգնություն է ստանում ԱՄՆ-ից: Այստեղ, սակայն, կա երկու կարևոր հանգամանք: Նախ, Հայաստանը՝ Ռուսաստանի հովանու ներքո գտնվող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ է: Երկրորդ, Ադրբեջանը ստանում է ռազմական օգնություն՝ ԱՄՆ ռազմավարական շահերը սպասարկելու համար: Մասնավորապես, ստանում է ռազմական օգնություն, որն ուղղված է Իրանի հետ սահմանի պաշտպանությունը ապահովելու համար. խոսքը Ադրբեջանի և Իրանի ծովային սահմանի՝ Կասպից ծովի մասին է: Այսինքն՝ ստացվում է, որ Ադրբեջանին տրամադրվող օգնությունը ուղղված չէ Հայաստանի դեմ, այլ ուղղված է Իրանի դեմ, ինչի մասին Միացյալ Նահանգների դեսպանը Հայաստանում հայտարարել է: Ինչ վերաբերում է զենքի և զինամթերքի վաճառքին, ապա այս առումով պետք է շեշտել, որ Միացյալ Նահանգները հակամարտող կողմերի զենք և զինամթերք չի վաճառում: Նենսի Փելոսիի այցից օրեր անց Հայ դատի հանձնախմբի կողմից հայտարարություն տարածվեց, որտեղ ասվում էր, որ 1991-ից ի վեր Կոնգրեսն առաջին անգամ քննարկում է Հայաստանին զենքի վաճառքի հարցը: Այնուամենայնիվ, անհայտ է՝ արդյո՞ք կհաջողվի իրականացնել այս նախաձեռնությունը, ի՞նչ հետևանքներ այն կունենա Հայաստանի համար և ընդհանրապես ի՞նչ աջակցության մասին է խոսքը:

Այսպիսով, սեպտեմբերի 17-19-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցը պատմական էր այն առումով, որ վերջինս դարձավ մինչև օրս Հայաստան այցելած ԱՄՆ ամենաբարձրաստիճան պաշտոնյան: Չնայած այցից մի քանի օր առաջ Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ իրականացված ագրեսիային՝ Նենսի Փելոսիի այցը Հայաստան չչեղարկվեց, քանի որ վերջինս նախօրոք ծրագրված էր, և այդ քայլով ԱՄՆ խոսնակը փորձեց արտահայտել անձնական համակրանքը հայերի և Հայաստանի նկատմամբ, ուր նախկինում նա չէր եղել: Այցի ընթացքում խոսնակ Փելոսին հստակ ուղերձներ հնչեցրեց ՀՀ կառավարությանը հայ-ամերիկյան հարաբերությունները խորացնելու համատեքստում, որոնցից ամենակարևորը, թերևս, այն էր, որ հայկական կողմը նախ ինքը պետք է հասկանա, թե ինչ է ուզում և այնուհետև դա քննարկի ԱՄՆ իշխանությունների հետ: Այսինքն՝ հստակ

առաջարկներ պետք է փոխանցվեն ՀՀ կառավարության կողմից ԱՄՆ իշխանություններին, եթե նման ցանկություն կա:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*